

ӘЛЖАЗМАЛАРЫ КАТАЛОГУ. I чилд (Тарих, чография, әдәбият һәзәрһјәси, тәзкирәләр, бәдиһ әдәбият һә муһһәәт). Азәр-бајчан ССР Елмләр Академјасы Нәшријјаты, Бақы, 1963, 513 сәһифә, гијмәти 2 манат.

ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ. I շատոր (Պատմություն, աշխարհագրու-թյուն, գրականության տեսություն, Թագրիրաներ, ղեղարկեստական գրականություն և գրագրություն), Աղրբեջանական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Բաքու, 1963, 513 էջ, գինը 2 ո.

Աղրբեջանական ՍՍՌ ԳԱ ձեռագրերի ֆոնդը Սովետական Միության ամենաերիտասարդ ձեռագրատներից մեկն է։ Այն հիմնադրված է Աղրբեջանում սովետական իշխանության հաղթանակից շուրջ 10 տարի հետո։ Ժողովածուն նախապես պատկանել է Աղրբեջանի պետական պատմական թանգարանին, ապա փոխադրվել ԱզՖԱՆ-ի կենտրոնական գրադարան։ Սակայն մեծ չափով այն աճել և հարստացել է գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտին հանձնվելուց հետո։

Աղրբեջանական ՍՍՌ Մինիստրների սովետի 1950 թ. հատուկ որոշմամբ գրականության ինստիտուտի Ձեռագրերի բաժինը վերակազմվեց որպես ձեռագրերի ինքնուրույն ուսպուրիկական ֆոնդ. նույն որոշման համաձայն Աղրբեջանի բոլոր գիտական հիմնարկություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում պահպանվող ձեռագրերը կենտրոնացվեցին այս ֆոնդում։ Մինիստրների սովետի որոշումը նպաստեց ֆոնդի արագ աճմանը։ Բավական է ասել, որ նույն թվականին ֆոնդի ձեռագիր միավորների թիվը 8000-ից բարձրացավ 15000-ի։ Հետագա տարիներում նույնպես ձեռագրերի թիվը աճում էր մեծ արագությամբ։

Հարուստ է ֆոնդում պահվող ձեռագրերի թեմատիկան. պատմություն, գրականություն, լեզու, բժշկություն, աստղաբաշխություն, մաթեմատիկա, բուսաբանություն, աստվածաբանություն և գիտության այլ բնագավառներ։

Աղրբեջանի տարբեր շրջաններից այստեղ հավաքված են աղրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն, բուրբերեն, թուրքմեներեն, ուզբեկերեն, ինչպես նաև հնդկերեն, հայերեն, վրացերեն, ռուսերեն և այլ լեզուներով գրված ձեռագիր մատյաններ։

Ֆոնդի հնագույն ձեռագրական միավորներից են X դարում մագաղաթի վրա «քուֆի» գրությամբ գրված «Ղուրանի» հատվածը, Ջովհարիի «Սիհահ-սուլուղա» աշխատության 1117 թ. ձեռագիրը, ինչպես նաև Աբու-Ալի Իբն-Սինայի «Կանոնի» 1140 թ. ընտիր ընդօրինակությունը։

Ռեսպուրիկական ֆոնդը հարուստ է հատկապես իսլամական Արևելքի ժողովուրդների դասական գրականության այնպիսի ներկայացուցիչների ղիվանների և ամբողջական երկերի հնագույն ու հազվագյուտ ընդօրինակություններով, ինչպիսիք են աղրբեջանական կլասիկներ Խականին, Նիզամին, Մահմուդ Շարուսթարին, Նասիմին, Ասար Քարրիզին, Խաթային, Ֆուզուլին, Վադիֆը և Բաքիխանովը, պարսկալեզու գրականության կլասիկներ Ֆիրդուսին, Խայամը, Անվարին, Մասնուդ-Սա'դ Սալմանին, Սա'դին, Քյամալ Խոջանդին, Հաֆեզը, Սալման Սաֆոյին, Ջամին, Ամիր-Խոսրով Դահլավին և Հասան Դահլավին, ուզբեկ հեղինակներ Ալիշեր Նավոյին և Ուլուգ-բեկը, թուրքմեն բանաստեղծ Մախտում-կուլին, թուրք գրողներ Նադիրը, Սաբիթն ու Համեդն, արաբ բանաստեղծներ Մուսթանարին, Իբն-Մալիքը և ուրիշներ։

Ձեռագրական ֆոնդի գիտաշխատողների կուլեկտիվը զգալի աշխատանք է կատարել այս մեծ ու արժեքավոր ժողովածուի գիտական նկարագրությունը նախապատրաստելու համար։ Նախապես, ըստ շորս հիմնական ֆորմատների, վերադասավորել և համարակալել են բոլոր ձեռագրերը և ապա սկսել գիտության տարրեր ճյուղերին վերաբերող ձեռագրերի նկարագրությունը։

Հիմնական հարցերին հանգամանալից պատասխաններ տալու համար առանձին աշխատակիցներ հանձնարարություններ են ստացել պատրաստելու օժանդակ ձեռնարկներ, որոնք մեծ չափով դալիս են հեշտացնելու հատկապես ձեռագրական միավորների անվանման, հեղինակների և գրիչների ինքնությունը ճշտելու աշխատանքները։ Այս առումով գովասանքի արժանի աշխատանք է կատարել ֆոնդի գիտական աշխատակից Փանահի-Մաքուլուն։ Իր ձեռքի տակ եղած արևելյան 10 հիմնական աղբյուրների հիման վրա նա կազմել և հրատարակել է գրականագիտական ընդարձակ մի աղյուսակ, որն ընդգրկում է Մերձավոր Արևելքի իսլամական ժողովուրդների գրավոր ժառանգության մեջ

հիշված մատենագրական հուշարձանների, ներառյալ հեղինակների, գրական անունների և տիտղոսների, ինչպես նաև գրիչների ու միջնադարյան մատենագրության այլ գործիչների արժեքնական ցանկը¹։

Ռեսպուբլիկական ֆոնդի այս անդրանիկ ցուցակում ձեռագրերը նկարագրված են թեմատիկ խմբավորման սկզբունքով։ Նկարագրված 1281 ձեռագրերից 154-ը պատմա-աշխարհագրական բովանդակություն ունեն, 165-ը թագթիրաններ են և գրականագիտական բնույթի ձեռագրեր, 888-ը գրական երկեր ու վերը նշված հեղինակների և այլոց չափածո կամ արձակ ստեղծագործությունների դիվաններ և այլ ժողովածուներ, իսկ 74-ը նամականիներ և նամակագրության ու գրագրության ուսուցման նպատակով կազմված ձեռնարկներ։

Այս անհամաչափությունը, հավանաբար, արդյունք է ցուցակագրողի և գլխավոր խմբագրի գրականագիտական նախասիրության։ Նման պարագաներում նպատակահարմար կլիներ, անշուշտ, ամբողջ հատորը նվիրել գրական երկերին, իսկ պատմա-աշխարհագրական ձեռագրերը, որոնցով ռեսպուբլիկական ֆոնդը նույնպես բավական հարուստ է, նկարագրել առանձին հատորում, ինչպես այդ արված է Ուզբեկական և Տաջիկական ակադեմիաների արևելյան ձեռագրերի նկարագրության ժամանակ։ Դա հնարավորություն է տալիս ձեռագրերը նկարագրելիս կատարել ըստ առանձին հարցերի կամ երկրների և այլ բնույթի խմբավորումներ, դրանով այն ավելի մատչելի դարձնելով ուսումնասիրողին։ Այդպիսի նկարագրության հաջող օրինակ կարող է ծառայել Տաջիկական ՍՍՌ-ԳԱ արևելյան ձեռագրերի ցուցակի I հատորը², որը թեև ամբողջովին նվիրված է պատմա-աշխարհագրական բնույթի ձեռագրերի և պատմական սկզբնաղբյուրների նկարագրությանը, սակայն ձեռագրերը նկարագրված են հետևյալ խմբավորումներով. ա) Պատմություն.— 1. Հնդհանուր պատմություն, 2. Միջին Ասիայի պատմություն, 3. Իրանի պատմություն, 4. Աֆղանստանի պատմություն, 5. Հնդկաստանի պատմություն, 6. Թուրքիայի պատմություն, 7. Այլ երկրների պատմություն. բ) Մեմուարներ և պատմական կենսագրություններ. գ) Աշխարհագրություն և պատմական տեղագրություն. դ) Ուղեգրություն-

ներ. ե) Ժամանակագրություններ և պատմական վավերագրեր։ Ինքնին հասկանալի է, որ նման ստորաբաժանումներ կարելի է կատարել նաև գրական հուշարձանների և գրականագիտական երկերի, ինչպես նաև միջնադարյան մատենագրության այլ բնագավառներին վերաբերող ձեռագրերի նկարագրությանը նվիրված առանձին հատորներում։

Հատորի գրական-գրականագիտական թեքումով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ նկարագրված ձեռագրերի մեջ գերակշռում են պարսկերեն ձեռագրերը։ Չնայած այն բանին, որ ընդհանրապես պարսից տղարի լեզուն IX—X դարերից սկսած շարունակ եղել է Մերձավոր Արևելքի մի շարք ժողովուրդների գրական լեզուն (Բրանում, Ագրեբջանում, Միջին Ասիայում, Աֆղանստանում, Հնդկաստանում և այլուր) և այդ լեզվով են գրվել պատմագրական և գրական-գեղարվեստական երկերը, սակայն առավելապես այդ լեզվով են գրված տարբեր ազգությունների պատկանող միջնադարյան բանաստեղծների ու տաղասացների արձակ և չափածո ստեղծագործությունները։ Կարելի է չկասկածել, որ եթե նկարագրված ձեռագրերի մեջ մեծ թիվ կազմեն ճշգրիտ գիտություններին վերաբերող, ինչպես նաև փիլիսոփայական կամ աստվածաբանական, կրոնա-դավանարանական ձեռագրերը, ապա գերակշռող լեզուն կլինեի արաբերենը, որը դարեր շարունակ եղել է իսլամական աշխարհի գիտության լեզուն։

Այսուհանդերձ հետաքրքիր է և արարատառ ձեռագրերի յուրաքանչյուր մեծ կամ փոքր ժողովածուի համար բնորոշ ներկա հատորում նկարագրված ձեռագրերի այսպես կոչված «ազգային կազմը». գրախոսվող հատորում նկարագրված են 826 պարսկերեն, 193 արաբերեն, 113 ադրբեջաներեն, 61 թուրքերեն, 43 ուզբեկերեն, 26 ադրբեջաներեն-պարսկերեն, 5 թուրքերեն-պարսկերեն, 5 արաբերեն-պարսկերեն, 1 կուրդերեն (Դաղստան), 1 թաթարերեն, 1 ադրբեջաներեն-կուրդերեն, 1 պարսկերեն-ուզբեկերեն և 1 ռուսերեն ձեռագրական միավորներ։

Նկարագրված ձեռագրերի ժամանակագրական սահմանը ձգվում է 1377-ից մինչև 1937 թվականը։ Նկարագրության համար հիմք ընդունելով առանձին հարցերին տրվող հակիրճ պատասխանների մեթոդը, հասկանալի է իհարկե, որ ոչ բոլոր ձեռագրերը նկարագրելիս սպառիչ պատասխաններ կարող էին տրվել հետևյալ հարցերին.

1. Հեղինակ.
2. Գրքի վերնագիրը.
3. Ի՞նչ լեզվով է գրված.
4. Ինքնագիր է թե ոչ.

¹ Понади Макулу, Эдаби Мә'лумат Чәдвәли, Бакы, 1963.

² Каталог восточных рукописей Академии наук Таджикской ССР, т. I, под редакцией и при участии проф. А. М. Мирзоева и проф. А. М. Болдырева, Дюшанбе, 1960.

5. Գրչության թվականը.
6. Գրիչ.
7. Վայր.
8. Գրություն.
9. Մանրանկարներ և զարդանկարներ.
10. Սկիզբ.
11. Վերջ.
12. Համառոտ բովանդակություն.
13. Զափ.
14. Թերթերի քանակը.
15. Շիֆրը.

Ինչպես իրավացի կերպով նշված է հատորի առաջարանում, գրչության թվականի ճշտումը ձեռագրերի նկարագրության հիմնական հարցերից մեկն է, և պետք է ասել, որ գրախոսվող հատորում նկարագրված ձեռագրերի մեծ մասում գրչության թվականները որոշ են: Սակայն եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ նկարագրված 1281 ձեռագրերից միայն 719-ի գրչության թվականն է որոշակի նշված, որոնցից 28-ը XV դարից, 51-ը XVI, 105-ը XVII, 81-ը XVIII, 405-ը XIX և 49-ը XX դարերից, ապա պետք է նշել, որ XV—XVIII դդ. շոշափելի թվով ձեռագրեր, գրչության թվականները չպահպանվելու հետևանքով, անորոշ են մնացել: Հավագույն դեպքում փորձ է արված հնագրական տվյալների օգնությամբ պարզել միայն մոտավոր զարը, բայց առանձին դեպքերում հարցը լիովին անպատասխան է թողնված (ձեռ. № 41, 95, 380, 381, 563, 584, 748 և այլն):

Պատմագրական և գրական-գեղարվեստական հուշարձանների վերնագրերի ճշտման և ձեռագրերի անվանումների մեջ վրիպումներ չկան. եթե հաշվի չառնենք այն, որ բազմահատոր երկերը նկարագրելիս, չի նշված, թե նկարագրվող ձեռագիրը տվյալ երկի ո՞ր հատորն է պարունակում: Այսպես օրինակ, հայտնի է, որ XVI դարի պատմիչ Խանդամիրի «Հարիւր-ուս-սիար» խորագիրը կրող պատմությունը բաշկացած է երեք ստվար հատորներից: Ձեռագրացուցակից տեղեկանում ենք, որ ռեսպուբլիկական ֆոնդում կան այդ երկի 7 գրչագրեր, որոնք ցուցակում նկարագրված են 29—35 համարների տակ, առանց նշելու սակայն, թե դրանք «Հարիւր-ուս-սիարի» ո՞ր հատորներն են: Նույնը պետք է ասել Միրխոնդի 5 հատորանոց «Թովգաթ-ուս-սաֆաի» 9 գրչագրերի (ձեռ. № 20—28), Իսթանբուլի Մուշիի «Թարիխ-ե ալամարա-յե արբասիի» (ձեռ. № 49, 50) և այլ բազմահատոր երկերի մասին: Անշուշտ, ուսումնասիրողը կարող է այդ կոահել նկարագրության ժամանակ մեջ բերված ձեռագրի սկզբի և վերջի տողերից, սակայն եթե հաշվի առնենք, որ շատ հաճախ ձեռագրերը սկզբից կամ վերջից և կամ երկուս-

տեք թերի են լինում, այդ դեպքում հարցը փաստորեն անպատասխան է մնում:

Նման և այլ դեպքերում միշտ էլ խրախուսելի է օժանդակ գրականության օգտագործումը: Նկատելի է, որ հատորը կազմողները առանձին դեպքերում օգտվել են այդ կարգի գրականությունից, սակայն առանց վկայակոչման: Հաշվի առնելով Ուզբեկական և Տաջիկական ակադեմիաների, ինչպես նաև ՍՍՄԽ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի (Ենինգրադի, Բաժանմունքի, Ենինգրադի համալսարանի արևելագիտական ֆակուլտետի և մի շարք այլ միութենական և արտասահմանյան մեծ ու փոքր ժողովածուների նկարագրության մինչ այժմ կատարված հրատարակությունները, ձեռագրերի նկարագրությանը կցված համապատասխան բիրիոգրաֆիան մեծ չափով օգնում է պարզելու նկարագրվող ձեռագրի արժեքն ու նշանակությունը տվյալ մատենագրական հուշարձանի ուսումնասիրության գործում:

Ձեռագրերի արտաքին նկարագրությունները համառոտ լինելով հանդերձ, գոհացուցիչ են: Ձեռագրաց ցուցակից օգտվողները որոշակի տեղեկություններ են ստանում յուրաքանչյուր ձեռագրի չափի, ծավալի (թերթերի քանակը), գրչության ձևի (նասխ, նասթա'լիկ, սուլս, շիքասթե, շիքասթե-նասթա'լիկ և այլն), օգտագործված թանաթի, մանրանկարների ու զարդանկարների մասին: Առանձին դեպքերում մանրամասն նկարագրված են նաև ուշագրության արժանի կազմերը: Վերջում նշված է նկարագրվող ձեռագրերի շիֆրը, որն անհրաժեշտ է նկատված նման թեմատիկ ցուցակներում, քանի որ ձեռագրերը ինվենտարային համարակալությամբ չեն նկարագրված:

Առանձին հուշարձանների բովանդակության մասին տրված տեղեկությունները խիստ համառոտ լինելով, հանրահայտ գործերի նկարագրության մեջ դրանց անհրաժեշտությունը չի զգացվում, հատկապես արևելագիտությանը քաջ ծանոթ այնպիսի կարևոր երկերի նկարագրության ժամանակ, ինչպիսիք են Իսթանբուլի Մուշիի «Թարիխ-ե ալամարա-յե արբասիի», Մուհամմադ Ջահիր-է-դ-դինի «Բարուրնամեն», Խանդամիրի «Հարիւր-ուս-սիար», Արղուլաիրն-Ֆազլուլլայի «Թարիխ-ե Վասսաֆ» և այլ պատմագրական երկեր:

Գեղարվեստական գրականության հուշարձանների բովանդակության նկարագրությունները ավելի սակավ են: Կլասիկների մեծ մասի երկերի ու դիվանների բովանդակությունը չի տրված, և դա ճիշտ է: Պետք է ի նկատի ունենալ, որ ցուցակը կազմված է մասնագետների համար, որոնք Ֆիրդուսու «Շահնամեի», Նի-

զամու «Խաւմսի» կամ նրա առանձին պոեմներին. Խաւմսի «Խոհաթ-ուլ-արակենի» կամ Ալիշեր Նավոյի «Նիզամ-ալ-շավահիր», ինչպես նաև վերջի հիշատակված և այլ պատմիչների երկերի բովանդակության մեկ-երկու տողով տրված Պկարագրություններ, կարիքը չեն զգում:

Ձեռագրաց ցուցակում առանձին համարներ են ստացել ձեռագրերի ոչ միայն հիմնական բնագրերը, այլ նաև նույն ձեռագրի լուսանցքներում ընդօրինակված այլ հեղինակների համանուն ստեղծագործությունները: Այսպես օրինակ, 524 համարի տակ նկարագրված Ամիր-Խոսրով Դահլավի Դիվանի լուսանցքներում ընդօրինակված Քյամալ Խոջանդիի, Բասաթիի, Շահիի (Աղա Մալիք Սամարղանդի), Իրն-Յամինի և Ազարի (Համզա Իրն-Արգ-ալ-Մալիք Խուսի-Բեյհակի) դիվաններն ու զազալները նկարագրված են 540, 591, 596, 610 և 612 համարների տակ: Եւ, անշուշտ, բավական հեշտացնում է ցուցակի օգտագործումը և հնարավորություն է տալիս նույն հեղինակին վերաբերող բոլոր բնագրերն ամփոփելու մեկ տեղ:

Ցուցակի օգտագործումը մեծ չափով հեշտացնում են հեղինակների, երկերի, ինքնագիր ձեռագրերի, գրիչների, ձեռագրերի գրչության թվականների ու վայրերի և այլ օժանդակ բնութարանների: Խիստ օգտակար են հատկապես, աղբյուրներն ցանկերից բացի, հեղինակների, երկերի և գրիչների զուգահեռ արարատառ ցանկերը ձեռագրերի լեզուներով, որոնք ցուցակը մատչելի են դարձնում նաև աղբյուրներին անծանոթ արևելագետներին:

Թեև պուրիկական ֆոնդի ամբողջ ձեռագրերի հազիվ տասնհինգ տոկոսի նկարագրությունը պարունակող ձեռագրացուցակի այս անդրանիկ հատորը իր հարուստ բովանդակությամբ գալիս է վկայելու ժողովածուի մեծ արժեքի և արևելագիտության տարրեր բնագավառների, հատկապես տեքստաբանական աշխատանքների համար նրա կարևոր նշանակության մասին:

Բավական է նշել, որ գրախոսվող հատորում կան 70-ից ավելի հեղինակային ինքնագրեր, որոնցից հնագույնը Արա-ալ-Վազվինի «Մանահիջ ալ-թալիթին վա Մաարիֆ ալ-Սադիկին» խորագրով կրող աշխատության 1377 թ. ձեռագիրն է: Ինքնագրերի մեջ, սակայն, զգալի տեղ են զբաղում XIX դարի, մասամբ նաև XX դարի սկզբի որոշ հեղինակների գործերը, որոնցից են 1091—1114 համարների տակ նկարագրված Լիթ Մոհսին Կարաբաղիի և կամ Հուզնի Սալահ-Իրն-Հաջի Բարա էֆենդի Նախավիի (N 1117), ինչպես նաև Շուա'ի Միրզա Քյարիմ Իրն-Բարաֆի Դարբանդիի (N 1118), բանաստեղծուհի Խուրշիդ-բանու Նաթավանի (N 1121), բա-

նաստեղծ Կասիրի (N 1123) և այլ ինքնագրեր:

Քիչ չեն նաև եղակի արժեք ներկայացնող և արևելյան բանասիրության ու տեքստաբանության համար բացառիկ նշանակություն ունեցող բնագրերը: Պատմական սկզբնաղբյուրներից կարելի է հիշատակել Հասան բեկ Թումուրի «Ահսան-ուլ-թավարիխ» XVII դարի առաջին կեսի ընտիր ընդօրինակությունը (N 40), Միրզա Մուհամմադ-Մեհդի խան Աստարաբադիի «Թարիխ-և Նադիրի» 1775 թ. ձեռագիրը (N 67), Արա-Միրզայի կողմից Նախլանի Քյարի-Ալի խանին տրված հրովարտական ժողովածուն, XIX դարի աղբյուրներից ապամագրության նշանավոր ներկայացուցիչներ Արա-Կուլի խան Բաթիխանովի «Դյուլիսթան-և Իրամի» հեղինակի ձեռքով սրբագրված օրինակը (N 105) և Միրզա Աղիգյոզալ բեկի «Նարադանամե» ինքնագիրը:

Առավել արժեքավոր ձեռագրեր կան նկարագրված ձեռագրաց ցուցակի դրական-դրականագիտական բաժիններում: Կան ձեռագրեր, որոնք իրոք ունիկալ արժեք ունեն և որոնցից մի քանիսը արդեն իսկ ենթարկված են բանասիրական ուսումնասիրության և դիտական լայն ճանաչում են ստացել: Աղբյուրներից դրականության պատմության համար վերին աստիճանի ուշագրավ երևույթ է XII—XIII դդ. պարսիկ բանաստեղծ Շեյխ-Աթթարի «Ասարնամե» 1478 թ. Թավրիզում կատարված աղբյուրներն թարգմանությունը (N 390 և 391), որն արդեն պատրաստված է հրատարակության: Բազմաթիվ են պարսկական և աղբյուրական կյանքների արձակ ու չափածո ստեղծագործությունների դիվանների հին և ընտիր ընդօրինակությունները, որոնք չեն կարող վրիպել բանասիրատեքստաբանների ուշադրությունից և առանց որոնք հնարավոր չէ կազմել միջնադարյան այնպիսի հեղինակների երկերի համեմատական բնագրեր, ինչպիսիք են Ջալալ-էզ-դին Թումին (N 413), Ամիր Խոսրով Դահլավին (N 524, 1436 թ. ընդօրինակություն), Իմադ-էզ-դին Նասիմին (N 603, XV դ. ձեռագիր), Մուհամմադ Ֆուզուլին (որի տարրեր աշխատություններից ձեռագրաց ցուցակում նկարագրված են 63 ամբողջական ձեռագրեր, N 800—862), Սադի Թարիքին (N 940, 1677 թ. ձեռագիր) և բազմաթիվ այլ հեղինակներ:

Հրատարակության որակը բնագրերից բարձր է, եթե հաշվի չառնենք արարատառ մասերում տեղ-տեղ նկատվող տպագրական վրիպակները: Պետք է ասել, սակայն, որ սգտագործված արարական սև տառերը, որով չարված են և՛ վերնագրերը, և՛ ձեռագրերի սկզբի ու վերջի տողերը, և՛ ցանկերը այնքան էլ նպատակահարմար չեն ձեռագրաց ցուցակի համար:

Դրանք հարմար են միայն վերնագրերի և ենթավերնագրերի համար: Լավ կլինեն եթե ձեռագրերի սկզբի և վերջի տողերը տրվեն տեքստերի համար ընդունված սովորական՝ սպիտակ տառերով:

Հատորում զետեղված են մանրանկարչության տեսակներից առավել հետաքրքիր ձեռագրերից հանված 38 մեծադիր նկարներ, գրանցից 4-րանհաջող գունավոր պատճենահանումների ներդիրներ են՝ տպված լիտոգրաֆիական ստվար թղթի վրա: Անհամեմատ ավելի հաջող են և ձեռագրերի մանրանկարների վարպետության բարձր աստիճանի մասին ավելի ճշգրիտ պատկերացում են տալիս գրքին հատկացված կավճապատ թղթի վրա սովորական սև ներկով

տպված նկարները, որոնք մեծ մասամբ վերցված են կլասիկների դիվաններից (Հաֆեզ, Նիզամի, Ֆուզուլի, Նավոյի և այլն):

Ազրբեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդի աշխատակիցների ջանքերով, ֆոնդի գիրեկտոր Ս. Սուլթանովի ղեկավարությամբ և պրոֆ. Հ. Արասլիի խմբագրությամբ հրապարակ հանված ձեռագրաց ցուցակի զրախոսվող հատորը զալիս է վկայելու ձեռագրերի հավաքման և ուսումնասիրության բնագավառում Ազրբեջանում վերջին տարիների ընթացքում ձեռք բերված հաջողությունների մասին:

Հ. ՓԱՓԱՋՅԱՆ

Է. Բ. ԱՂԱՅԱՆ, Գրաբարի քերականություն, հատոր I, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, 362 էջ:

Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր է. Աղայանի «Գրաբարի քերականություն» Հեղինակի երկհատորանոց աշխատության առաջին հատորի I գիրքն է, որ նվիրված է գրաբարի հնչյունաբանությանը:

Առաջաբանի մեջ Հեղինակը գրում է, որ ինքն աշխատության առաջին հատորը բաժանում է չորս գրքի՝ ա) Հնչյունաբանություն, բ) Ձևաբանություն, գ) Ծարահյուսություն, դ) Բառագիտություն, իսկ երկրորդ հատորում նախատեսում է քննել գրաբարի շրջանաբաժանման և «ներս ու ժողովրդական լեզվի փոխարարությունների» հարցերը «իրեն նախապատրաստություն պատմական ուսումնասիրության»: Այսպիսով պարզվում է մի ընդարձակ ծրագիր մեր լեզվի բազմակողմանի ուսումնասիրության, որի միայն առաջին մասն է այս հրատարակված գիրքը:

Ուսումնասիրելով հայ հին մատենագրության լեզուն և միաժամանակ ոգտագործելով գրաբարի վերաբերյալ հայ և օտարազգի լեզվաբանների հետազոտությունների արդյունքները, Հեղինակն իր գրքում նկարագրելու և բացատրելու է դասական գրաբարի հնչյունական և ուղղագրական երևույթներն իրենց ժանրամասնություններով: Գրքում կատարված է խստագույն բնորոշում. մեզ ավանդված լեզվական փաստերի միջից զատված են ուշ շրջանի կամ բարբառային երևույթները և քննության են ենթարկված միայն V դարի առաջին կեսի (դասական գրաբարի) հնչյունական երևույթներն իրենց սկզբնական կայուն վիճակում, որով հե-

ղինակը տվել է այդ շրջանի համաժամանակյա (սինխրոնիկ) ուսումնասիրությունը:

Գրքի հիմնական նյութը բաժանված է 5 գլխի: Առաջին գլխում («Ընդհանուր հիմունքներ») բացատրված են այն ընդհանուր սկզբունքները, որոնցով Հեղինակը կատարում է գրաբարի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը: Այդ սկզբունքները հիմնված են լեզվաբանության մեջ կիրառվող նորագույն, մասնավորապես հնչյունաբանական վերլուծությունների ժամանակակից մեթոդների վրա. իր այդ ուղղությամբ գիրքը նորություն է հայ լեզվաբանական գրականության մեջ: Տալով հնչյունի բնորոշումը և նկարագրելով հնչյունաբանական վերլուծության մեթոդը լեզվաբանական միավորների (բառերի) հակադրության միջոցով՝ Հեղինակը հող է նախապատրաստում լեզվական նյութի կոնկրետ վերլուծության համար:

Գրքի ամենածավալուն բաժինն է երկրորդ գլուխը («Գրաբարի հնչյունային համակարգը»), որտեղ բառերի իր բացատրած հակադրության միջոցով (առո-տար, առու-արու) Հեղինակը որոշում է, թե ինչ հնչյուններ է ունեցել դասական գրաբարը: Վերլուծությունների մեջ Հեղինակը ելնում է բառերի գրաբարյան ավանդական ուղղագրությունից, բնգունելով, որ «իրեն ընդհանուր կանոն մեարդյան գրի մեջ ամեն մի հնչյուն արտահայտվում էր մեկ տառով՝ բայց զեպքերում, յուրաքանչյուր տառ ուներ միայն մեկ արտասանություն» (էջ 354): Հնչյունաբանական վերլուծությունների հիման վրա Հեղինակը, իրեն վերջնական եզրակացություն,